

Բովանդակություն

Ներածություն	3
1. Հաստատության գործունեությունը	5
1.1 Դպրոցի առաքելությունը	9
1.1 Դպրոցի առաքելությունը բավարարելու է հետևյալ կրթական կարիքները-	13
1.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին	20
1.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների (դահլիճ, լաբորատորիա, արհեստանոց, առարկայական կաբինետ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին	22
2. Իրավիճակի վերլուծությունը, դպրոցի ուժեղ և թուլ կողմերը	48
2.1 Շենքային պայմանների վերլուծություն	49
2.2 Նյութատեխնիկական բազան	59
2.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն	66
2.4 Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	74
2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում	80
2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում	85
2.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն	90
2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն	99

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն	102
2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը	106
3. Հաստատությունում առկա հիմնախնդիրները ոլորտների	111
4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ ու միջոցառումներ	111
5. Չարգացման ծրագրի կատարման պատասխանատուները	112
6. Չարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները	112
արդյունքների գնահատման չափանիշները	113
7. Չարգացման ծրագրի իրականացման ռիսկերը	113
8.Չարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	114
9.Չարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները	114

Ներածություն

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: / <<Կրթության մասին>> ՀՀ օրենք, Հոդված 3-ի 1-ին մաս/

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: / <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299/>

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը և եթե դպրոցի աշխատանքային պլանը հիմնականում ուշադրություն է դարձնում դպրոցի ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարական պլան, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան, ոչ միայն ամենօրյա, այլև ապագա խնդիրների լուծմանը, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացու ձևավորումը:

<<2023-2028 թթ. ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) մշակել են հիմքում դնելով և՛ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և՛ զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև դպրոցի առանձնահատկությունները և՛ հենվելով նաև ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի վրա՝ հաշվի առնելով մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35- Ն հրամանի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 399-Ա հրամանի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ են ունեցել դպրոցի աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները արտացոլել են դպրոցի զարգացման ծրագրում և հիմք ընդունելով դպրոցի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրս ուղղված է նաև դրանց աստիճանական

զարգացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

Ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը՝

- 1. Հաստատության գործունեությունը**
- 2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը**
- 3. Նպատակների և խնդիրների սահմանումը**
- 4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը**
- 5. Պատասխանատուները**
- 6. Ռիսկերը: Ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործունեություններ**
- 7. Արդյունքների գնահատման չափանիշները.**
- 8. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները**
- 9. Վերահսկողության մեխանիզմները**

1. Հաստատության գործունեությունը

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացման միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: (

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876>)

Ջեռ.՝ (+374255)2-24-88

Ջասցե՝ ք. Սպիտակ, Այգեստան 53, 1802

Վեբ կայք՝ <https://spitak4.schoolsite.am/>

Էլ. փոստ՝ spitak4school@yandex.ru

Փոստային դասիչ՝ 1802

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ոչ առևտրային

Իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

Դպրոցի հիմնադրումը՝ 1955թ-ին

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 1993 թ

Պետոճգիստրի գրանցման վկայականի համարը՝ 03Ա056856

Պետոճգիստրում գրանցման ամսաթիվը՝ 23.01.2003թ

Դպրոցի շենքը՝ հարմարեցված

Դպրոցի տիպը՝ հիմնական

Աշխատանքային շաբաթը՝ 5օրյա

Աշխատանքային ռեժիմը՝ միաժամ

Ջարկայությունը՝ 3

Մակերեսը՝ 5400ք.մ.

Նախագծային հզորությունը՝ 163 աշակերտի համար

Փաստացի հաճախող աշակերտների թիվը՝ 110

ԿԱՊԿՈԼ աշակերտների թիվը՝ 1

Ջրամատակարարումը՝ Շուրջօրյա կենտրոնացված

Կոյուղացումը՝ Կենտրոնացված

Ջեռուցումը` Կենտրոնացված

Տնօրեն` Պետրոսյան Օֆելյա

Դպրոցի պատմությունը`

<http://ori.mtad.am/educational/>

Դպրոցը հիմնադրվել է 1955թ-ին և 1955թ-ից մինչև 1960թ-ը եղել է Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի թիվ 61 յոթնամյա դպրոց: 1961 թ-ից այն դարձել է Սպիտակի 4-րդ ութնամյա դպրոց: Առաջին տնօրենը եղել է Վարդգես Չաքարյանը: 1968 թ-ից մինչև 1972թ-ը տնօրեն է եղել Քնարիկ Պետրոսյանը: 1972թ-ին դպրոցը տեղափոխվել է <<Չերյումուշկա>> նորակառույց թաղամաս, դարձել է միջնակարգ` ունենալով 8 մասնաշենք, երկհարկանի տիպային մի կառույց: 1972 թ-ից մինչ 1978 թ-ը տնօրեն է եղել Ռուբեն Սիմոնյանը: 1978-1988թ-ը դպրոցը ղեկավարում էր Կորյուն Չաքարյանը: 1989 թ-ից դպրոցը գործում էր տնակային պայմաններում, իսկ 1993 թ. Քուվեյթի հայ համայնքը դպրոցին նվիրեց նոր շենք: 2005 թ-ին դպրոցը հիմնանորոգվեց, բարեկարգվեց բակը, իսկ 2007 թ-ին կառուցվեց նոր մարզադահլիճը: 1989 թ-ից մինչև 2003 թ-ը դպրոցի ղեկավարությունն ստանձնել է Քնարիկ Պետրոսյանը, իսկ նրա` թոշակի գնալուց հետո` Օֆելյա Պետրոսյանը, որը պաշտոնավարում է մինչ օրս:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 2003թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետնեգիստրի տարածքային բաժնում (վկայական` 03Ա056856, գրանցված 23.01.2003թ): Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 03.06.2022թ.-ին: Դպրոցի շենքը հարմարեցված է, ուսումնառությունը կազմակերպվում է մեկ հերթով, 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, որը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որը սահմանում է ՀՀ կառավարությունը:

2017թվականի սեպտեմբերի 1-ից դպրոցն իրականացնում է համընդհանուր ներառական կրթության:

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

- ❖ **Պետական գրանցման վկայական**
- ❖ **Դպրոցի կանոնադրություն**
- ❖ **Լիցենզիա**
- ❖ **Դպրոցի զարգացման ծրագիր**
- ❖ **Առարկայական ծրագրեր**
- ❖ **Ներքին կարգապահական կանոններ**
- ❖ **Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան (թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Դպրոցի շենքի սեփականության վկայական**
- ❖ **Սովորողների շարժի մատյան**
- ❖ **Սովորողների անձնական գործ (թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան 12. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան**
- ❖ **Աշխատողների հրամանագիրք**
- ❖ **Աշակերտների հրամանագիրք**
- ❖ **Աշխատողի անձնական գործ(թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդիկավորումների, ծնողական, աշակերտական, խորհուրդների արձանագրությունների մատյաններ**
- ❖ **Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ (թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Հաստիքացուցակ (թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Տարիֆիկացիոն ցուցակ(թղթային և էլեկտրոնային)**
- ❖ **Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան:**

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են ` համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատուները:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով`

ՀՀ Սահմանադրություն

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>

ՀՀ օրենքներ`

- ❖ <<Հանրակրթության մասին>>
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908>
- ❖ , <<Կրթության մասին>>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
- ❖ <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>,
- ❖ << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=51750>
- ❖ << Լեզվի մասին>>,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418>
- ❖ << Ստանդարտացման մասին>>
- ❖ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74337>
- ❖ << Երեխաների իրավունքների մասին>>
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115>
- ❖ << Լիցենզավորման մասին>>
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=73268>
- ❖ ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքով>>,
<http://www.irtek.am/views/act.aspx?tid=176124>
- ❖ ոլսոմնական հաստատության կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով :

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139>

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային անձնական ոչ գույքային իրավունքներ, պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի եւ իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեռաթղթեր, ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ:

1.1 Հաստատության առաքելության

**Առաքելությունը կամ տեսլականը
կազմակերպության ցանկալի ապագայի
մտապատկերն է:**

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ մտածելակերպով սերունդ առողջ քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար:

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում ենք կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: «Արագությունների», «տեղեկատվության», «ինտեգրման» անվանված քսանմեկերորդ դարը պահանջում է արմատական փոփոխություններ կրթական ոլորտում: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ ենք ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ կրթական բարենպաստ միջավայրում իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ պետական ու հասարակական վերաբերմունքի ճշգրտման, որպեսզի այն վերաճի այնպիսի կրթական հաստատության, որտեղ ուսուցման արդյունավետության կատարելագործումը կդիտվի որպես դպրոցի զարգացման գրավական: Մեր կրթական ոլորտը կուղորդվի դեպի գիտելիքների տնտեսություն և կապահովի մեր համակարգի տեղը գիտելիքների տնտեսության ոլորտում մրցակցող այլ երկրների կրթական համակարգերի շարքում:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. հուլիսի 15-ի N814-Ա/Ք հրամանի տրված լիցենզիաների՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70014> (emis-ում կատարվել է N814-Ա/Ք հրամանով հատկացված տեղերի փոփոխություն՝ տար. 65 տեղը փոխարինելով 68, հիմնական 92 տեղը՝ 95-ով) ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի

Վարդանանց N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿն ըստ լիցենզիայի իրականացնում
է հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական հանրակրթական՝ սերիա՝ N 0331 , 68 տեղ,
- Հիմնական հանրակրթական՝ սերիա N 0326 , 95 տեղ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

№ 0331

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի
Վարդանանց N4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության իրավ անվանումը, կազմակերպիչի անվանումը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ
(ստորագրությունը)

Ա. Աշոտյան
(անունը, ազգանունը)

Կ.Տ.

« 15 » հուլիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

№ 0326

Սույնով վավերացվում է, որ
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի
Վարդանանց N 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(կազմակերպության կրիվ անվանումը, կազմակերպման իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Այգեստան 53
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) Ա. Աշոտյան (անունը, ազգանունը)

Կ.Տ.

« 15 » հուլիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

1.1 Դպրոցի առաքելությունը բավարարելու է հետևյալ կրթական կարիքները.

- ★ Ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը:
- ★ Սովորողներին տալ ազգային հենքի վրա տարրական և հիմնական որակյալ կրթություն և նրանց մեջ ձևավորելով կոմպետենտ քաղաքացիներ , որոնք օժտված կլինեն անհրաժեշտ գիտելիքներով , հմտություններով, դիրքորոշմամբ:
- ★ Դպրոցում ավանդական դասից անցում կատարել կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված դասերի:
- ★ Սովորողների մեջ ձևավորել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացի , որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական (արեհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններում:
- ★ Պահպանել սովորողների և մարդկային արժանապատվությունը:
- ★ Սովորողի մեջ զարգացնել համակեցության, հանդուրժողականության, համագործակցության, ազգային դաստիարակության` պետական մտածելակերպ, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժվարությունների դիմակայելու պատրաստ, որակներ ունեցող մարդու ձևավորում:
- ★ Կերտել հստակ արժեհամակարգ ունեցող և գիտելիքներով զինված մարդ:
- ★ Սովորողների համար ստեղծել կրթական միջավայր, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

- ★ Շարունակաբար ավելացնել ՏՀՏ-ի դերը կրթության համակարգում:
- ★ Հանրակրթությունը դպրոցում իրականացնել սովորողների տարիքային զարգացման մակարդակին համապատասխան:
- ★ Ապահովել հիմնական կրթության հասանելիությունը յուրաքանչյուր անձի համար՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից՝ հարամարեցնելով կրթական ծրագրերը, իրականացնելով տարբերակված ուսուցում և անհատական ուսուցման պլանավորում:
- ★ Սովորողների համար ստեղծել համապատասխան հարմարեցված միջավայր՝ ըստ իրենց ընդունակություններին, կարողություններին և առողջությանը, և ապահովել կրթություն իրենց առանձնահատկություններին համարժեք:
- ★ Դպրոցի ներառական կրթական միջավայրի ստեղծումով նպաստել ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) ներգրավվածությանը իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացում:
- ★ Սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն. մեղիագրագետ, համարձակ երազող, սեփական տեսակետը բարձրաձայնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու, ինքնուրույն կյանքին պատրաստ անհատ:
- ★ Կիրառել կրթության և արվեստի ներգործության ուժը սովորողների առողջական, հոգեբանական խնդիրները հաղթահարելու գործում:
- ★ Սովորողների մոտ ձևավորել իրենց շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:
- ★ Նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:
- ★ Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:
- ★ Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ սովորողը կարողանա ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:

- ★ Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոց:
- ★ Սովորողին ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:
- ★ Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:
- ★ Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողունակություն:
- ★ Սովորողներին հմտացնել նախագծային ուսուցման մեջ:
- ★ Պահպանել սովորողների ու աշխատակազմի համար ուսումնադաստիարակչական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպելով առողջության պահպանման և ամրապնդման համար միջոցառումներ:
- ★ Նպատակային ուսուցողական ծրագրեր իրականացնելու միջոցով սովորողների շրջանում ձևավորել անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ (այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին տիրապետում, ուսումնական վարժանքների իրականացում):
- ★ Բարձրացնել սովորողների իրավագիտակցությունը:
- ★ Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը (Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ):
- ★ Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ ձևավորել:
- ★ Ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան դպրոցում ծավալել աշակերտական խորհրդի գործունեություն, որի ներկայացրած առաջարկություններն արտացոլելու են սովորողների կարիքները՝ փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և

տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության պայմաններում:

★ Ապահովել սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը, նրանց մասնակցությունը մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին, մարզական և մշակութային մրցույթներին մասնակցությունը:

★ Մանկավարժական կազմի մասնագիտական չափանիշների կատարելագործման միջոցառումներ իրականացնել (վերապատրաստումներ, ատեստավորումներ՝ այդ թվում ներառական կրթության թեմաներով):

★ Սովորողների մոտ ձևավորել և զարգացնել հետեւյալ կարողունակությունները՝

1. Խնդիրների համալիր լուծման,
2. Քննադատական մտածողության,
3. Ստեղծարարության,
4. Մարդկային ռեսուրսների կառավարման,
5. Փոխգործակցություն մյուսների հետ,
6. Հուզական բանականության,
7. Վերլուծություններ և որոշումների ընդունման,
8. Մասնագիտական կողմնորոշման,
9. Բանակցելու,
10. Քաղաքացիական պատասխանատվության,
11. Սոցիալական ձեռներեցության,
12. Ժամանակի կառավարման,
13. Փոփոխություններին ադապտացվելու ճկունության:

Վերոնշյալ կոմպետենտցիաները կարևոր դեր ունեն սովորողների մեջ որակյալ, հասարակությանը և երկրին պիտանի քաղաքացու ձևավորման և, հետագայում նաև, որպես որակյալ աշխատողների կայացման գործում: Ուստի այս հատկանիշները սովորողների կրթության և ուսումնառության հիմքում պետք է դիտարկել ոչ որպես ցանկություն, այլ՝ որպես կենսական անհրաժեշտություն:

Դպրոցի առաքելությունը նաև բարենպաստ կրթական միջավայրի ապահովման միջոցով, ազգային հենքի վրա, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որի լիարժեք իրականացումը պայմանավորված է տարբեր ոլորտների՝ դպրոցի կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների, հաստատության վարչատնտեսական գործառույթների, աշխատանքների ճիշտ կազմակերպմամբ:

Դպրոցի կառավարմանը մասնակցում են բոլոր նրանք, ովքեր պատասխանատվություն են կրում ստանձնած գործի նկատմամբ և ապահովում ու վերահսկում են ուսումնական հաստատության կողմից իր գործունեության իրականացումը:

Ջանրակրթական դպրոցի կառավարման մարմիններն են՝

- 1) հիմնադիրը.
- 2) նախարարությունը.
- 3) տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը.
- 4) խորհուրդը.
- 5) հանրակրթական դպրոցի տնօրենը:

www.arlis.am/documentview.aspx?docid=59769

Ներդպրոցական կառավարման համակարգն իրականացնում է՝

- Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի գործունեության կազմակերպումը,
- Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը,
- Դպրոցում պարտականությունների բաշխումը,
- Դպրոցի տնօրենի, փոխտնօրենների, դասղեկի գործառույթներ,
- Դպրոցի համագործակցությունը միջավայրի, ծնողների հետ,
- <<Դժվար>> դաստիարակվողների հետ տարվող աշխատանքների կազմակերպում,
- Դպրոցի գործունեություն:

Ներդպրոցական ղեկավարության Էությունն ու արդյունավետությունն ապահովվում է ուսուցման բոլոր ներքոհիշյալ օղակների ճշգրիտ և փոխկապակցված աշխատանքով.

- 1. Դպրոցի կառավարման խորհուրդը, դպրոցի մանկավարժական խորհուրդը և տնօրենը**
- 2. Դպրոցի փոխտնօրենները և կազմակերպիչը**
- 3. Ուսուցիչների մեթոդական միավորումները**
- 4. Ուսուցիչները, դասղեկները**
- 5. Ծնողական խորհուրդը**
- 6. Աշակերտական խորհուրդը**

Ձևավորված բոլոր խորհուրդները ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմել է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը :

Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է հաստատությունում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշիչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.

Դպրոցի ուսուցման լեզուն գրական հայերենն է: Դպրոցի ուսումնական գործընթացն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Նախարարի N54-Ն 20.07.2021թ.հրամանով հաստատած օրինակելի ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով: <https://escs.am/am/news/9309>, իսկ այժմ՝ ՀՀ ԿԳՄՍ Նախարարի 27 հուլիսի 2023 թվականի N 98-Ն հրամանով հաստատած օրինակելի ուսումնական պլանով <https://escs.am/am/news/17547>

- Հաստատությունում ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացվում է սովորողների առաջադիմության տվյալների, անցկացվող ընթացիկ, ամփոփիչ և արտաքին գնահատումների, կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները՝ ամեն տարի ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցով, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերանայելով մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները.

- Հաստատությունն ապահովվում է ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին (մարդկային, ժամանակային, նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար.
- Հաստատությունում գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար

Ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրատեսական դարձնելու գրավականներն են՝ կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումները, սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ, կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը, համայնքային պատասխանատվությամբ գործունեությունը դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում, արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն), դպրոցում ձևավորված ավանդույթները, խրախուսման միջոցները, սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին և այլն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրականացնելիս նաև պետք է հնարավորինս բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերություններին: Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և օրինակելի դասերի միջոցով : Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքերը:

«Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարորյա ուսուցման կազմակերպման կարգի» պահանջին համապատասխան յուրաքանչյուր դպրոց պետք է իրականացնի երկարորյա ուսուցում:

Ուսումնական հաստատության երկարորյա խմբի կրթական ծրագրերը ներառում են երկարորյա խմբի սովորողների սննդի, հանգստի, դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարորյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս: Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Ծնողի նախաձեռնությամբ երկարորյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաև դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարորյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական և միջին դպրոց):
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարորյա ուսուցման ծրագիր:
- Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարորյա ուսուցման կազմակերպման ծրագիր:

Հաստատության վարչատնտեսական գործառույթների հիմնական ուղղություններն են՝ հաշվապահություն, գնումների գործընթաց. պայմանագիր, սննդի կազմակերպում, սանիտարահիգիենիկ վիճակի ապահովում, անվտանգության տեխնիկայի ապահովում, ընթացիկ տեխնիկական սպասարկում, որը ևս ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանը:

1.2 Համապատասխանությունը

պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

- Դպրոցը, համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին , իր գործունեությունը իրականացնում է որպես համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող ժամանակակից դպրոց՝ բոլորի համար: Համայնքի հետ ակտիվ համագործակցելով՝ դպրոցը սովորողների համար ապահովում է այնպիսի կրթական միջավայր, որտեղ սովորում և կարող են սովորել ու իրենց ընդունակություններն առավելապես դրսևորել բոլոր աշակերտները:
- Դպրոցը կրթությունն իրականացնում է ելնելով՝
 1. Սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին համապատասխան,
 2. Ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ,
 3. Հայրենասիրական դաստիարակությամբ ,
 4. ԿԱՊԿՈՒ սովորողների ինտեգրմամբ ,
 5. Համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան,
 6. Շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին համապատասխան,
 7. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատմամբ՝ գործունեության վերլուծությամբ:
 - Դպրոցի գործունեությունը հանրամատչելի է և թափանցիկ՝ ապահովելով ժողովրդավարական կառավարման սկզբունքները:
 - Դպրոցի գործունեությունը իրականացվում է համայնքի հետ համագործակցությամբ (համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածություն և նրանց մասնակցությունը

համայնքային աշխատանքներին, համայնքի բնակիչների համար միջոցառումների կազմակերպում, շաբաթօրյակների կազմակերպում, ծառատունկ և այլն):

- Դպրոցի գործունեությունը իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության թափանցիկ ծրագրերի իրականացմամբ:
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների իրականացմամբ (էքսկուրսիաներ, սեմինարներ, քննարկումներ, կինոնկարների դիտում, զրույցներ համայնքի պատմամշակութային և արժեքավոր վայրերի ճանաչման և պահպանման շուրջ):
- Դպրոցի գործունեությունը իրականացվում է կրթական գործընթացում բոլոր շահառուների ` սովորողների, ծնողների, մանկավարժական և վարչական աշխատողների, խորհրդի և խորհրդակցական մարմինների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ,պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, համայնքային մասնակցությամբ:

**1.3 Համապատասխանությունը
 հաստատության ենթակառուցվածքների
 հնարավորություններին / դահլիճներ,
 լաբորատորիաներ, արհեստանոցներ,
 առարկայական կաբինետներ,
 ճաշարան, բուժկետ և այլն/, մարդկային
 ռեսուրսներին և ներուժին**

Ըստ <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի՝

- Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, գիտաարտադրական գործունեության եւ կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվում եւ զարգացվում է բյուջետային, ինչպես նաեւ սեփական միջոցների հաշվին՝ կրթության զարգացման պետական ծրագրի եւ ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի հիման վրա:
- Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաեւ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ եւ սարքավորումներ, համակարգչային դասարաններ:

Դպրոցն ունի՝

Շենքային պայմանները

Շենքային	Քանակը	Մակերես՝	Փաստացի
----------	--------	----------	---------

պայմանները		քառ.մետր	վիճակը / լավ, գերազանց, բավարար/
Տոնօրենի կարիներ	1	15	լավ
ուսուցչանոց	1	35	լավ
դասասենյակներ	9	31,5	բավ.
հոգեբանի սենյակ	1	15	բավ.
առարկայական սենյակներ/ շախմատ,.../	3	15, 15, 20	բավ.
ՆՁՊ դասասենյակ	1	30	բավ.
գինասենյակ	1	6	լավ
<<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա	1	30	լավ
համակարգչային սենյակ	1	32	բավ.
հաշվապահի սենյակ	1	15	բավ.
ճաշարան	1	45	լավ
խոհանոց	1	10	լավ

բուժենյակ/ բուժկետ	1	10	բավ.
գրադարան	1	30	լավ
արհեստանոց	1	39	բավ.
մարզադահլիճ	1	218	բավ.
հանդերձասրահ	2	20	բավ.
սանհանգույց՝ նախատեսված տղաների և աղջիկների համար	4-ը՝ աղջիկներ ի, 4-ը՝ տղաների համար	22	բավ.
պահակակետ	1	6	բավ.
կաթսայատուն	1	32	բավ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԵՐ ԵՒ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խամրակ	Ծիւղաթղթերի եւ հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ2)	Ծավալը (մ3)	Այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1	Եննք(եր)	1	2080	6240	
2	Առանձնասենյակներ	9	128	384	
3	Դասարաններ	9	315	945	
4	Առարկայական լսարաններ	3	51	153	
5	Լաբորատորիաներ	1	18	54	
6	Արհեստանոցներ	1	39	117	
7	Մարզադահլիճներ	1	216	1296	
8	Գրադարան(ներ)	1	30	90	
9	Բուժկետ	1	20	60	
10	Ճաշարան	1	54	162	
11	Հանդերձարան(ներ)	2	20	60	
12	Զուգարան(ներ)	8	22	66	
13	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ		578,338		
14	Մարզահրապարակ(ներ)	2			
15	Համրակազարաններ	0			
16	Լնջասենյակներ	0			
17	Համակարգիչներ	11			
18	Համակարգչային այլ տեխնիկա	3			
19	Հեռախոսներ	1			
20	Զեռուցվող տարածքներ		2296		

Խամրակ	Ծիւղաթղթերի եւ հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ²)	Ծավալը (մ³)	Այլ տեղեկություններ
7	2	3	4	5	6
21	Զեռուցման տեսակը	կարբուսիլային	32		
22	Զեռուցման օրերը	150			
23	Տրանսպորտային միջոցներ	0			
24	Լոգապատ սովորողներ	0			
25	Երեւել սովորողներ	0			
26	Գիշերող սովորողներ	0			
27	Սրգատու այգիներ	0			
28	Դեկորատիվ բուսական այգիներ	0			
29	Եննքների ներսի ծաբրվող մակերեսներ		1327		
30	Եննքների դրսի ծաբրվող մակերեսներ		3791		
31	Սան. հանգույցների ծաբրվող մակերեսներ	2	12	36	
32					
33					
34					
35					
36					
37					
38					
39					
40					

Նյութատեխնիկական բազան

Անվանում	Քանակ /հատ/	Փաստացի վիճակը / լավ, գերազանց, բավարար/
DVD նվագարկիչ	1	բավ.
XEROX սարք	2	լավ
Աշակերտական աթոռ	210+105	բավ.
Աթոռ սրահների համար / ուսուցչանոցի/	12	բավ.

Անխափան սնուցման սարք UPS	5	բավ.
Աշակերտական սեղան ֆիզիկայի լաբորատորիայի համար	1	լավ
Աշակերտական սեղան-նստարան	30	բավ.
Աշակերտական սեղան-աթոռի կոմպլեկտ	62	բավ.
Բազմոց	2	բավ.
Գրապահարան	2	բավ.
Գրատախտակ	16	բավ.
Գրատախտակ սպիտակ	1	բավ.
Գրադարանի գեղարվեստական գրքեր	1750	բավ.
Դաշնամուր	1	բավ.
Դարակաշար միակողմ գրադարանի համար	2	բավ.
Էլեկտրական սալօջախ	1	գերազանց
Էլեկտրական վառարան	1	գերազանց
Թենիսի սեղան	1	լավ
Թեքահարթակ դրսում	2	բավ.

Լվացարան	6	բավ.
Լվացարան 2 տեղանի՝ խոհանոցի	1	գերազանց
Խաղային քառակուսի սեղան	4	բավ.
Խոհանոցային դարակաշար մետաղյա շրջանակով	2	գերազանց
Խոհանոցային սեղան	1	գերազանց
Կահույք փափուկ (բազմոց)	2	բավ.
Կամրջակ	2	բավ.
Կշեռք	1	գերազանց
Կրակմարիչ	2	բավ.
Հագուստի պահարան մանկական	4	բավ.
Հակահրդեհային վահանակ	1	բավ.
Համակարգիչ	11	3-ը՝ բավ. 8-ը՝ անսարք
Հայտարարությունների տախտակ	1	բավ.
ՀՀ դրոշ	1	լավ
Ճաշասեղան	1	բավ.

Մարզանստարան	2	բավ.
Մարզապատ	5	բավ.
Մեծ այծիկ	1	բավ.
Նստարան բակի	1	լավ
Շախմատի գուլթ	12	բավ.
Շախմատի սեղան	4	բավ.
Ուսուցչի աթոռ	12	բավ.
Ուսուցչի սեղան	18	բավ.
Չիրկիզվող պահարան	1	բավ.
Պահարան	8	բավ.
Քիմիական ապակեղենի պահարան	1	բավ.
Պահարան առաջին օգնության դեղամիջոցների	1	բավ.
Պատի հայելի	2	լավ
Պլանշետ	49	լավ
Ջրատաքացուցիչ	1	գերազանց
Սալօջախ էլեկտրական	1	գերազանց
Սառնարան	1	գերազանց
Սեղան տնօրենի կաբինետի	1	լավ
Սկաներ	2	բավ.

Սպասքի ընդունման սեղան	1	լավ
Տեսապրոյեկտոր	1	բավ.
Տպիչ	3	բավ.
Ցուցադրական սեղան \$իզիկայի	1	լավ
Ցուցադրական ստենդ ՆՁՊ	1	լավ
Փոքր այծիկ	2	բավ.
Չանգահարող սարք	1	բավ.
Լաբորատոր գույք	2	բավ.
Ձեռուցման համակարգ	1	բավ.

Առկա կրթական ռեսուրսներ են՝

- ❖ Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել բոլորը՝ այդ թվում նաև օժտված և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,
- ❖ Սովորողի կրթական կարիքի գնահատում,
- ❖ Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
- ❖ Համայնքի հետ համագործակցություն ,
- ❖ Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք համագործակցությամբ,
- ❖ Աշակերտների մտավոր զարգացման բավարար պայմաններ,
- ❖ Սովորողների արժեհամակարգի ձևավորում,
- ❖ Փորձառու մանկավարժական համակազմ,
- ❖ Մեթոդափավորումների համակցված աշխատանք,
- ❖ Խորհրդակցական մարմինների աշխատանքը

- ❖ Դրական հոգեբանական միջավայրը,
- ❖ Մասնակցային և համագործակցային աշխատանք,
- ❖ Համընդհանուր ներառական կրթության իրականացում :

Մարդկային ռեսուրսներ և ներուժ

Մարդկային ռեսուրսները մարդկանց աշխատունակ մասն են, որոնք իրենց հոգեֆիզիոլոգիական և ինտելեկտուալ որակների շնորհիվ մատուցում են ծառայություններ՝ տվյալ դեպքում կրթական ծառայություններ:

Մարդկային ներուժը աշխատանքային ռեսուրս է դառնում միայն այն դեպքում, երբ այն ներառվում է սոցիալական արտադրության համակարգում:

ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցիչների քանակական և որակական ցուցանիշներն են՝

Ուս. տարիներ	2018-2019		2019-2020		2020-2021		2021-2022		2022-2023	
	Ուսուցիչների ընդհանուր թիվ	Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	Ուսուցիչների ընդհանուր թիվ	Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	Ուսուցիչների ընդհանուր թիվ	Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	Ուսուցիչների ընդհանուր թիվ	Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	Ուսուցիչների ընդհանուր թիվ	Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը

								վածու թյունը		ությու նը
	19	14,32	19	14,32	17	16,00	17	16,00	17	16,00

Ուսուցիչների քանակական ցուցանիշներն են՝

Ուսուցիչների տարիքային կազմ	Մինչև 30 տարեկան	31-40 տարեկան	41-50 տարեկան	51-60 տարեկան	61 և ավելի
Թիվ	3	3	5	5	1

	1-5 տարի	6-15 տարի	16 և ավելի տարիներ
Ուսուցիչների թիվն ըստ աշխատային փորձի	4	1	12

Ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ	Մեծագույն տարի	Պաշտոնը	
			1
1	Վերջնական խառնուրդի	1981	հասցեագրիչ
2	Օկուպացիայի ժամանակահատվածի	1978	գրքագր
3	Պոլիտեխնիկական դպրոցի	1965	արտեսի
4	Պոլիտեխնիկական դպրոցի	1983	գրքագր
5	Համալսարանի ընդհանուր մասնաճյուղի	1971	համալսարան
6	Համալսարանի Երևանի մասնաճյուղի	1965	համալսարան
7	Ֆիզիկամաթեմատիկական դպրոցի	1959	արտեսի
8	Վարդապետյանի Դպրոցի	1966	գրքագր
9			համալսարան

Վարչական աշխատողներ՝

Տնօրեն-1

Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով-1

Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակց. գծով-1

Ուսուցիչ -17

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ - 1

Սպասարկող անձնակազմ

Լաբորանտ -1

Գրադարանավար-1

Ուսուցչի օգնական -1

Յոգերան - 1

Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ

Հաշվապահ-1

Գործավար-1

Համակարգչի օպերատոր- 1

Հավաքարար - 2

Պահակ-3

Կաթսայատան հնոցապան / սեզոնային /- 3

Ուսուցիչների որակական ցուցանիշներն են՝

1. Տարակարգ ունեցող ուսուցիչներ- 0
2. Կամավոր ատեստավորված ուսուցիչներ-0
3. Վերապատրաստում անցած ուսուցիչներ-16
4. Վերապատրաստող ուսուցիչներ -0
5. Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ-2
6. Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ-16
7. Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ-1

Դպրոցի սովորողների մասին տեղեկություն.

2022-2023 ուսումնական տարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, որտեղ սովորում են 110 աշակերտ՝

տարրական դպրոց —57 աշակերտ (4 դասարան) ,

միջին դպրոց — 53 աշակերտ (5 դասարան)

1-ին դասարան- 13 աշակերտ

2-րդ դասարան- 16 աշակերտ

3-րդ դասարան- 14 աշակերտ

4-րդ դասարան- 14 աշակերտ

5-րդ դասարան- 8 աշակերտ

6-րդ դասարան- 9 աշակերտ

7-րդ դասարան- 14 աշակերտ

8-րդ դասարան- 9 աշակերտ

9-րդ դասարան- 13աշակերտ

Դպրոցին կից նախակրթարան չի գործում :

Սովորողների թիվը և առաջադիմությունն ըստ ուսումնական տարիների (բացառությամբ ԿԱՊԿՈՒ)

Տարեթիվ	Սովորողների թիվը	Գերազանց սովորողներ	Լավ սովորողներ	Բավարար սովորողներ	Առաջադիմության որակ	ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը
2018-2019	118	23	40	55	100/50	4
2019-2020.	120	24	31	65	87/46	3
2020-2021	113	28	32	53	100/53	1
2021-2022	113	25	35	53	100/53	1
2022-2023	110	29	35	46	109/59	1

Մարզային, հանրապետական օլիմպիադաներում ու մարզական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցությունը 2021-2022, 2022-2023 ուստարիների ընթացքում :

Ցուցանիշ	2021-2022	2022-2023
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը	5	7
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	0	1
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը	0	1
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	0	0
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը	0	2

Ֆինանսատնտեսական գործունեություն

Դպրոցի բյուջեի ծախսերը 2022-2023 թթ.՝

01.01.2022 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **1.457,600 դրամ**, 2022 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 43.187,500 **դրամ**, ընդամենը՝ 2022 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **44.645,100 դրամ**:

2022թ.	Հաստատված նախահաշվով նախատեսված գումարը /հազար դրամ/	Փաստացի կատարված ծախսեր /հազար դրամ/
Տնտեսագիտական դասակարգման հովաճների անվանումները		
Աշխատողների աշխատավարձեր	38 317 .8	38 287. 6
Տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճար	0	0
Էլեկտրաէներգիայի ծախսեր	800.0	700.0
Գազի ծախս	1 101.5	1 011.9
Աղբահանության ծախս	53.2	53.2
Ջրամատակարարման և ջրահեռացման ծախս	130.0	118.5
Կապ և ինտերնետ	127.0	99 .5
Տեղեկատվական ծառայություններ	15.0	13.0
Գազի տեխսպասարկում և անվտանգություն	55.0	54.7

Հրդեհային անվտանգության ծառայություն	20.3	20.3
Ախտահանման աշխատանքների ծախս	0	0
Գրասենյակային նյութեր և հագուստ	130.0	115.2
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1 207.2	1 156.2
Այլ նպաստներ բյուջեից/դասագրքերի վարձավճար/	34.6	34.6
Համակարգչային ծառայություններ/ՅԾ/	0	0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	55.0	54.3
Էլեկտրոնային ստորագրություն	3.0	3.0
Պարտադիր վճարներ	80.0	37.5
Այլ ծախսեր	450.0	382.9
Ընդամենը	44 645.1	44 176.0
Մնացորդ	0	469 200

18. Դպրոցի բյուջետային միջոցների ծախսերը՝ դրամային արտահայտությամբ. 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 8 ամսվա համար

01.01.2023 թ.-ի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդը **469.200 դրամ**, 2023 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ կատարվել է 8 ամսվա համար՝ **28829000 դրամ**, ընդամենը՝ 2023 թ.-ի նախահաշվով նախատեսված գումարը՝ **29298200 դրամ** :

Նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը	0	0
Ճնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	0	0
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը	0	0
Աշխատավարձերի վճարման գծով տարեկան ծախսերի չափը	26 000.0	16 822.5
Կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափը	1 630.0	1 506.7
Նոր գույքի, սարքավորումներ	0	0

ի ձեռք բերման գծով տարեկան ծախսերի չափը		
---	--	--

Ուսումնական հաստատության 2022-2023
ուսումնական տարվա տարիֆիկացիոն
ցուցակ

Բնակարանի և Համայնության և արժանացել ուսումնական
 Հաստատության կառավարման խորհրդի կողմից

Խորհրդի նախագահ՝ Քևույ Նիկ. Փուրջաբա
 « 02 » « 01 » 20 23 Վ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

« 22 » յուլի 2023 Վ. Քևույ
Խորհրդի նախագահ
 « 02 » « 01 » 20 23 Վ.

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
 ՏԱՐԻՖԻԿԱՑԻՈՆ ՑՈՒՑԱԿ**

(աշխատատեղերի Հաշվառման Տարեկան)

« 20 22 » - 20 23 » ուսումնական տարի

« 22 » յուլի 2023 Վ. Քևույ Նիկ. Փուրջաբա
Խորհրդի նախագահ ԿՄ. Կիսիսեան Քևույ - 90624

Տարիֆիկացիոն Հանձնաժողով

նախագահ՝ <u>Քևույ</u>	<u>Քևույ</u>	<u>Փուրջաբա</u>
անդամներ՝ <u>Քևույ</u>	<u>Քևույ</u>	<u>Փուրջաբա</u>
<u>Քևույ</u>	<u>Քևույ</u>	<u>Փուրջաբա</u>
<u>Քևույ</u>	<u>Քևույ</u>	<u>Փուրջաբա</u>
<u>Քևույ</u>	<u>Քևույ</u>	<u>Փուրջաբա</u>

Աստվածական հաստատության դեկլարացիոն և սանկցիոնական անձնակազմը			Վրձե օրեր	Կրթական աստիճան	հաստատություն անվանումը	Մասնագի- տությունը	և ի՞նչ անարկա է դասավանդում	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը
համար	Ազգանունը, անունը, հայրանունը	Վրձե օրեր	Կրթական աստիճան	հաստատություն անվանումը	Մասնագի- տությունը	և ի՞նչ անարկա է դասավանդում	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը	Կրթական աստիճանը և օրը
1	Գրիգորյան Օհնիսե Դասակարգիչ	1958	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Ֆիզիկա	գեոգր. և մաթ.	03.10.81 կր. 570	42	42		
2	Մելիքյան Եսայի Զարմախ	1961	Բ	Հիմնական կրթություն ԱՄՕ 21201	Ֆիզիկա	մաթ. և գեոգր.	01.09.94 կր. 269	26	34		
3	Մելիքյան Արցախյան Բարսեղ	1961	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	պրոգր. մաթ.	մաթ. և գեոգր.	20.08.83 կր. 1142	37	42		
4	Մանուկյան Բենյամին Լուսինե	1993	Բ	Հիմնական կրթություն ԱԲ 202545	հայերեն և քիմիա	հայերեն և քիմիա	17.08.20 կր. 028	2	2		
5	Օհանյան Արմեն Շահին	1975	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	հայերեն և քիմիա	հայերեն և քիմիա	01.09.97 կր. 395	23	23		
6	Սահակյան Գրիգոր Երվանդ	1973	Բ	Միջին կրթություն ԱՄՕ 23563	սեպարատիստ	հայերեն և քիմիա	01.09.96 կր. 352	24	30		
7	Կարամյան Դավիթ Բենյամին	1973	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	պրոգր. մաթ.	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.94 կր. 192/3	25	31		
8	Մելիքյան Զարգուհի Բարսեղ	1990	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	պրոգր. մաթ.	պրոգր. մաթ. և սեպարատիստ	23.12.12 կր. 129	9	9		
9	Սարգսյան Գրիգոր Սարգիս	1975	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	մաթ. և սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.97 կր. 394	23	27		
10	Գրիգորյան Մելիք Զարմախ	1996	Բ	Հիմնական կրթություն ԱԲ 280394	մաթ. և սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	17.08.20 կր. 028	2	2		
11	Մելիքյան Գրիգոր Բենյամին	1958	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Ֆիզիկա	պրոգր. մաթ.	01.09.97 կր. 339	43	43		
12	Կարամյան Արմեն Երվանդ	1963	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	պրոգր. մաթ.	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.97 կր. 449	38	38		
13	Սարգսյան Լուսինե Զարմախ	1967	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	մաթ. և սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.99 կր. 443	32	37		
14	Սահակյան Զարգուհի Սարգիս	1966	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Ֆիզիկա	պրոգր. մաթ.	02.02.99 կր. 4352	20	27		
15	Սահակյան Արմեն Սարգիս	1992	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.88 կր. 043	2	34		
16	Գրիգորյան Արմեն Զարմախ	1965	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.80 կր. 474	40	34		
17	Սարգսյան Գրիգոր Սարգիս	1957	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.80 կր. 6534	40	40		
18	Սարգսյան Զարգուհի Սարգիս	1966	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	01.09.93 կր. 65	33	40		
19	Սարգսյան Արմեն Սարգիս	1987	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	19.02.18 կր. 010	5	5		
20	Սարգսյան Գրիգոր Սարգիս	1967	Բ	Հիմնական կրթություն Սեբեհյան հիմնական դպրոցի քիմ. դասընթաց	Սեպարատիստ	պրոգր. մաթ. և սեպարատիստ	02.08.98 կր. 376	23	23		

Շարքարդան ժամերն ըստ
ըստարանների

Կարգահամար	Կարգահամար				հար- դան	ընդա- մենը	Տար- ի դար
	IV	V-IX	IX	X-XII	X-XII	I-XII	I-
14	15	16	17	18	19	20	
1							
2							
3							
4		5,5	5,5			5,5	
5		30	30			30	
6		14	14			14	
7		12	12			12	
